



Կարգապահական գործ թիվ 20013

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի նոյեմբերի 17-ի թիվ 115-րդ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/83-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Գայանե Դեմիրջյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի և Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,
քննության առնելով փաստաբան Վարդան Առաքելյանի (արտոնագիր՝ թիվ 995), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սոնա Ղազարյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Վարդան Առաքելյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում Դիմողի լուսանկարի տակ գրառում է կատարել՝ փորձելով պարզել «եզաբուծարանի տեղը» և այն վառելու և դրանից ազատվելու կոչեր է կատարել: Դրան հետևել է Վարդան Առաքելյանի մեկ այլ գրառում, որով նա առաջարկել է «դնել խարույկի վրա և մեղմ այրել»:

Դիմողը նշել է, որ փաստաբանի կողմից նման վարքագծի դրսևորումը մտահոգիչ է և դատապարտելի և խնդրել է Պալատի նախագահին կարգապահական վարույթ հարուցել փաստաբան Վարդան Առաքելյանի նկատմամբ և նրա վարքագծին տալ գնահատական:

Դիմումին կից ներկայացվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից կատարված քաղվածք:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 22.06.2020թ. թիվ 104-Ա/ԿԳ-20013 որոշմամբ փաստաբան Վարդան Առաքելյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև**

Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ.-ի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

25.06.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

07.09.2020թ.-ին Դիմողի կողմից ներկայացվել է դիրքորոշում, որով վերջինս պնդել է 02.06.2020թ.-ին ներկայացված դիմումով իր հայտնածը:

3.2. Վարդան Առաքելյանի կողմից ներկայացված բացատրությունը

Գործի նախապատրաստման ընթացքում փաստաբան Վարդան Առաքելյանի կողմից ներկայացվել է բացատրություն, որում հայտնվել է, որ Դիմողի կողմից ներկայացված դիմումում բարձրացված հարցը զուրկ է որևէ օբյեկտիվ գնահատականից, իրեն ներկայացվում է քաղաքական հետապնդում, քանի որ ինքը Ազգային ժողովի ընտրություններում ընդգրկված է եղել «Լուսավոր Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում:

Վարդան Առաքելյանը նշել է, որ որևէ բռնության կոչ չի արել: Դիմողի կողմից ներկայացված գրառումը եղել է կատակային գրառում, որը վերաբերել է ընդհանուր երևույթին և երկրում ստեղծված անհասկանալի իրավիճակին, որով որևէ կերպ չի շահարկվել Դիմողի անունը, և նրա հետ չի անցկացվել որևէ համեմատական:

Վարդան Առաքելյանը Դիմողին չի ճանաչել և նրան վիրավորելու կամ սպառնալու դիտավորություն չի ունեցել: Բացի այդ, Վարդան Առաքելյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում 26.05.2020թ.՝ ժամը 16:54-ին արել է հետևյալ գրառումը. «*Ժողովուրդ ջան, հարգելիներս, եթե որևէ մեկն իմ որևէ փոստից նեղվել կամ նեղվում է, հրապարակավ հայտնում եմ, որ որևէ փոստում որևէ մեկին հստակ ի նկատի չեմ ունեցել: Ես իմ որևէ փոստում որևէ մեկին չեմ վիրավորում՝ առավել ևս որևէ մեկի նկատմամբ բռնության կոչեր չեմ հնչեցնում: Իմ բոլոր փաստերը եղել են, կան ու լինելու են գնահատողական դատողություններ, որոնց գնահատական կարող եք տալ ինքներդ: Եվս մեկ անգամ փաստեմ դրանք բոլորը եղել են գնահատողական դատողություններ և ուղղված չեն եղել որևէ մեկի անձի դեմ, որովհետև սիրում եմ բոլորիդ ... »:*

Դիմումին կից ներկայացվել են «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից կատարված քաղվածքներ և «բուժարան» բառի բացատրությունը:

Փաստաբանը նաև միացել է խորհրդի 17.11.2020թ. կարգապահական նիստին և հայտնել, որ վերջինս պնդում է նախորդիվ գրավոր բացատրությամբ իր հայտնած դիրքորոշումը և հավելել, որ չի ճանաչում Դիմողին, ուստի չի ունեցել և չէր էլ կարող ունենալ որևիցե միտում Դիմողին սպառնալու կամ վիրավորելու: Փաստաբանը նաև հայտնել է, որ վերջինիս համոզմամբ իր նկատմամբ քաղաքական հետապնդում է տեղի ունենում Դիմողի կողմից:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն գործով վկաներ չեն ներգրավվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 24.08.2020թ. ին կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 28.08.2020թ.-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 17.11.2020թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

Փաստաբան Վարդան Առաքելյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարել է հետևյալ գրառումները.

- «Կներեք կոպտության համար, բայց եզարուծարանի տեղը ով գիտի, վառենք, պրծնենք», «Ընդունեցի մեղքս: Դնենք խարույկի վրա և մեղմ այրենք:», սույն գրառումը կատարվել են Դիմողի լուսանկարի տակ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի համապատասխան էջի քաղվածքով:*

- «Ժողովուրդ ջան, հարգելիներս, եթե որևէ մեկն իմ որևէ փոստից նեղվել կամ նեղվում է, հրապարակավ հայտնում եմ, որ որևէ փոստում որևէ մեկին հստակ ի նկատի չեմ

ունեցել: Ես իմ որևէ փոստում որևէ մեկին չեմ վիրավորում՝ առավել ևս որևէ մեկի նկատմամբ բռնության կոչեր չեմ հնչեցնում: Իմ բոլոր փաստերը եղել են, կան ու լինելու են գնահատողական դատողություններ, որոնց գնահատական կարող եք տալ ինքներդ: Եվս մեկ անգամ փաստեմ դրանք բոլորը եղել են գնահատողական դատողություններ և ուղղված չեն եղել որևէ մեկի անձի դեմ, որովհետև սիրում եմ բոլորիդ ... », սույն գրառումը կատարվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի փաստաբանի, էջում 26.05.2020թ.՝ ժամը 16:54-ին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի համապատասխան էջի քաղվածքով:*

6. Փաստաբանի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Վարդան Առաքելյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2010թ., և 2017-2020թթ. վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, չհաշված սույն կարգապահական վարույթը:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 22.06.2020թ. թիվ 104-Ա/ԿԳ-20013 որոշմամբ փաստաբան Վարդան Առաքելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը՝

– արդյոք Դիմումում նշված և Փաստաբանին վերագրվող արտահայտությունները կարող են համարվել կոռեկտության շրջանակներից դուրս (զսպվածությունը և բարեկրթությունը սահմանազանցող).

– արդյոք Դիմումում նշված և Փաստաբանին վերագրվող արտահայտությունները ուղղված են եղել Դիմողին և Դիմողի հրապարակային խոսքին:

Վերը նշված երկու հարցադրումներին Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել խոսքի ազատության սահմանադրական իրավունքի լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝

տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանները կաշկանդված են նաև Կանոնագրքի կարգավորումներով և պարտավոր են իրացնել խոսքի ազատության իրենց իրավունքը բացառապես կոռեկտության շրջանակներում և փաստաբանի բարձր կոչմանը հարիր:

Տվյալ դեպքում Փաստաբանի կողմից կատարված՝ **«Կներեք կոպտության համար, բայց եզարժարանի տեղը ով գիտի, վառենք, պրծնենք» ... «Ընդունեցի մեղքս: Դենք խարույկի վրա և մեղմ այրենք»** գրառումներն իրենց բովանդակային իմաստով կոռեկտության շրջանակից դուրս են, սակայն նշված գրառումներն ինքնին բավարար չեն փաստաբանի արարքը Կանոնագրքի 2.2.2 ենթակետին հակասող որակելու համար:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը, խորհուրդը փաստում է հետևալը.

Կարգի 3.3.1 կետը սահմանում է՝ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ Փաստաբանի գրառումները վերաբերել են իրեն:

Ինչ վերաբերում է համապատասխան գրառումները Դիմողի լուսանկարի տակ հրապարակված լինելուն, ապա Փաստաբանն իր մեկ այլ գրառմամբ հստակեցրել է, որ « ... որևէ փոստում որևէ մեկին հստակ ի նկատի չեմ ունեցել: Ես իմ որևէ փոստում որևէ մեկին չեմ վիրավորում՝ առավել ևս որևէ մեկի նկատմամբ բռնության կոչեր չեմ հնչեցնում: Իմ բոլոր փաստերը եղել են, կան ու լինելու են գնահատողական դատողություններ, որոնց գնահատական կարող եք տալ ինքներդ: Եվս մեկ անգամ փաստեմ դրանք բոլորը եղել են գնահատողական դատողություններ և ուղղված չեն եղել որևէ մեկի անձի դեմ, որովհետև սիրում եմ բոլորիդ ... »:

Փաստաբանն իր բացատրությամբ հստակեցրել է, որ իր «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարած գրառմամբ չի հետապնդել Դիմողին վիրավորելու կամ սպառնալու նպատակ, չի դրսևորել վարքագիծ, որով կասկածի տակ է դրվում կամ խաթարվում է փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Այս պայմաններում, երբ փաստաբանը ժխտում է դիմողին վիրավորելու հանգամանքը, Պալատի խորհուրդը ապացուցված չի համարում նշված գրառումը փաստաբանի կողմից դիմողին հասցեագրելու փաստը:

Վերոգրյալից ելնելով Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանի արարքում Կանոնագրքի խախտում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-

ին մասի 1-ին կետի, և Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 6.1.1 (2) ենթակետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վարդան Առաքելյանի (արտոնագիր՝ թիվ 995) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Գայանե Դեմիրջյան

**17 նոյեմբերի 2020թ.
թիվ ԿԳ/83-Ա
ք. Երևան**